ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ N 1511237
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ
ԳԱՆՁՄԱՆ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

09 մարտի 2021թ.

ք. Երևան
(կազմման վայրը)

Ակտի հասցեատեր

«ԷՖՖԵԿՏ ՊՈՌ» ՍՊԸ

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը (անհատ ձեռնարկատեր նշումով) կամ իրավաբանական անձի անվանումը)

0	0	1	8	3	5	3	8

(հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ-ն)

Ք. Երևան, Տիգրանյան փ. 7շ. 14բն.

(անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման հասցեն կամ իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն)

Խախտման նկարագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՕՀ վարչության պետի 26.01.2021թ-ի թիվ 1511237 որոշման համաձայն «Էֆֆեկտ Պոռ» ՍՊԸ-ի նկատմամբ իրականացվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Իրականացված ՕՀՄ-ի շրջանակներում պարզվել է, որ 09.02.2021թ-ին ժամը 13:10-ի սահմաններում «Զվարթնոց» օդանավակայանի բեռնամաքսային տերմինալից դուրս է եկել ընկերության աշխատակից հանդիսացող Գարեգին Կարպիսի Դիլոևի կողմից շահագործվող «MERCEDES-BENZ» մակնիշի 36 QZ 420 հաշվառման համարանիշի բեռնատար ավտոմեքենան և ժամը 13:45-ի սահմաններում կայանել է ք. Երևան, Կոմիտասի պ. 58 հասցեով շենքի բակում գտնվող ավտոտնակի հարևանությամբ, որտեղ վերջինիս կողմից իրականացվել է թափքում առկա բեռների բեռնաթափում: 09.02.2021թ-ին ժամը 14:15-ից 18:00-ի սահմաններում իրականացված նախնական հետազոտման արդյունքում պարզվել է, որ բեռը բաղկացած է թվով 46 ստվարաթղթե բեռնարկղերի մեջ փաթեթավորված բջջային հեռախոսների աքսեսուարներից և այլ կենցաղային էլեկտրական սարքավորումներից: Նախնական ուումնասիրության արդյունքում չորս բեռնարկղերում հայտնաբերվել են ՌԴ-ից ՀՀ ներկրված այն ապրանքախմբաքանակի տեսականուն, քանակին, գներին և ընդհանուր արժեքին վերաբերող ինը թերթից բաղկացած փաստաթղթեր: Այնուհետև սույն թվականի փետրվարի 10-ից առ 11-ը ընկերության աշխատակից Գարեգին Կարպիսի Դիլոևի մասնակցությամբ իրականացված ՕՀՄ-ի արդյունքում կատարվել է ներկրված և պահեստավորված ապրանքների ուղեկցող փաստաթղթերում՝ մասնավորապես մատակարար ՌԴ «Պարամետր» ՍՊԸ-ի կողմից 08.02.2021թ-ին դուրս գրված թիվ 56 հաշիվ ապրանքագրում ու վերը նշված թվով չորս արկղերից հայտնաբերված ինը փաստաթղթերում

առկա առանձին ապրանքատեսակների տեսականուն, քանակին, գնին, ընդհանուր արժեքին վերաբերող տվյալների հետազոտում՝ համադրում, ինչպես նաև այդ փաստաթղթերում առկա տվյալների համադրում փաստացի ՌԴ-ից ՀՀ ներկրված և նշված հասցեով պահեստում բեռնաթափված ապրանքատեսակների փաստացի քանակների և տեսականու հետ: Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընկերության կողմից ՌԴ-ից ներկրված բեռն ուղեկցող փաստաթղթերում ներառված չէ ընդհանուր գումարով 283.954 ՌԴ ռուբլի արժեքով (համարժեք ՀՀ կենտրոնական բանկի օրվա փոխարժեքով հաշվարկված 2.004.715 ՀՀ դրամին) և վերը նշված թվով չորս բեռնարկղերից հայտնաբերված փաստաթղթերում ներկայացված տեսականուն, քանակին, գնին և ընդհանուր գումարին համապատասխան, փաստացի ներկրված բեռում առկա ապրանքատեսականի: Պարզվեց, որ նշված ուղեկցող փաստաթղթերում չներառված 283.954 ՌԴ ռուբլու կամ համարժեք 2.004.715 ՀՀ դրամի ապրանքների արժեքը ընկերության մոտ գործող վաճառքի գներով կազմել է 2.405.658 ՀՀ դրամ: Նշված տեղափոխումը իրականացվել է՝ առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթերի:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընդհանուր 2.405.658 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքների տեղափոխման համար ընկերության կողմից 09.02.2021թ-ին ժամը 13:45-ի դրությամբ դուրս գրված չի եղել համապատասխան ուղեկցող փաստաթուղթ:

Վերոգրյալը հաստատվել է ընկերության աշխատակից Գարեգին Կարպիսի Դիլոևի կողմից 11.02.2021թ-ին տրված գրավոր հայտարարությամբ:

Թիվ 1511237 արձանագրությամբ 11.02.2021թ. հարուցվել է վարչական վարույթ: Կողմը, պատշաճ ծանուցված լինելով, չի ներկայացել 18.02.2021թ-ին նշանակված վարչական վարույթի լսումներին: Գործում առկա չեն լրացուցիչ ապացույցներ, չեն ներկայացվել միջնորդություններ:

Այսպիսով, «Էֆֆեկտ Պռո» ՍՊԸ-ի կողմից խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ըստ որի ՀՀ տարածքում մատակարարվող կամ տեղափոխվող՝ շարժական, նյութական գույք հանդիսացող ապրանքների (բացառությամբ հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից հանրային ծառայությունների ենթակառուցվածքները շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով տեղափոխվող ապրանքների, Կառավարության սահմանած ցանկում ներառված ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից տեղափոխվող հիմնական միջոցների, ինչպես նաև խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով ապրանքների և արտարժույթի) մատակարարումը կամ տեղափոխությունը պարտադիր կարգով իրականացվում է ուղեկցող փաստաթղթերով:

Կատարված խախտման համար պատասխանատվություն է նախատեսված ՀՀ հարկային օրենսգրքի 410-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ըստ որի «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման համար Օրենսգրքով սահմանված պահանջների խախտման՝ Օրենսգրքով սահմանված պահանջները չբավարարող ուցեկցող փաստաթղթով կամ առանց ուղեկցող փաստաթղթի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության հայտնաբերման դեպքում, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի, խախտման հիմք հանդիսացող գործարքի կամ գործողության մասով՝ գանձվում է

տուգանք այդ ապրանքի գնի (արժեքի) 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 200 հազար դրամից:

Տվյալ դեպքում «Էֆֆեկտ Պռո» ՍՊԸ-ի կողմից խախտումը վերջին 1 տարվա ընթացքում կատարվում է առաջին անգամ: Ապրանքների ընդհանուր գումարը կազմել է 2.405.658 ՀՀ դրամ, որի 50 տոկոսը կազմում է 1.202.829 ՀՀ դրամ, ուստի օրենսդրական պահանջից ելնելով «Էֆֆեկտ Պռո» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառելի է 1.202.829 ՀՀ դրամի չափով տուգանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ ՊԵԿ նախագահի 28.08.2019թ. N 562-Լ հրամանով.

Որոշեցի

1.Հաշվարկել և «Էֆֆեկտ Պռո» ՍՊԸ-ին գանձման առաջադրել 1.202.829 ՀՀ դրամի չափով տուգանք՝ որպես հարկային պարտավորություն, համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

	Վճարման ենթակա գումար (դրամ)	Վճարման ուղղությունը	հաշվի համարը
Հարկային օրենսգրքի 410-րդ հոդվածով սահմանված տուգանք ընդամենը, որից՝	1.202.829	պետական բյուջե	900008000490

2. Ընդունել ի գիտություն՝

1) Սույն վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո՝ օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտով առաջադրված տուգանքը չվճարվելու դեպքում, ենթակա է հարկադիր կատարման:

2) Սույն վարչական ակտն ընդունված է համարվում ստորագրվելու օրվանից և ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3) Սույն վարչական ակտն ուժի մեջ մտնելուց երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

4) Սույն վարչական ակտը կազմվել է երեք օրինակից:

ԻՎ պետ Ա. Մնացականյան

Վարչական ակտն ընդունող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը

ստորագրությունը

Կ.Տ.

Ստացա ակտի մեկ օրինակը

ընդամենը 3 էջ

տնօրեն Վարդան Հարությունյան

ֆիզիկական անձի անունը, ազգանունը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատեր նշումով) իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար (գրագրության ընդունման համար պատասխանատու անձ՝ հատուկ առաքման դեպքում)

_____,,_____,,_____ 2021թ.

ստորագրությունը

(նշում ակտը ստորագրելուց և (կամ) ստանալուց հրաժարվելու մասին)